

Հրատ. ՍԻՂՈՒՆ մատենաշարի թիւ 7

2279

ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ

ԶԱԻԵՃՏ ՄԵԿ ԱՐԱՐ

ՇԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆ
ՄՕԼԻԲԵՐԻ



37

Տպագրութիւն

Հրատարակութիւն

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Rue Nahr St. (Michel)

ՊԵՅՐՈՒԹ

1934

84

Մ-86

84

Մ-86

9

Հրատ. ՍիՀՈՒՆ մասեցաւորի քիւ 7

ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ

ԶԱԻԵՅՏ ՄԵԿ ԱՐԱՐ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆ
ՄՕԼ.ԻԷՐԻ



Տպագրութիւն

Հրատարակութիւն

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Rue Nahr St. (Michel)

ՊԵՅՐՈՒԹ

1934

7011

2003

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

Տամուշո Խուլ
 Բշափս Որսորդ
 Էկլադեն Տամուշոյի աղջիկը
 Պոնիժաս Տամուշոյի սպասաւորը
 Պարսիզպան մը

59761 ան



2700-72

ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ

(Տեսարանը կը ներկայացնէ զարգարուն սենեակ մը, աջ ու ձախ սեղաններ, նստարան, ձախ կողմը երկու դուռ, աջ կողմը մէկ դուռ եւ մէկ պատուհան)

ՏԵՍԻԼ Ա.

Էկլադեն եւ Պոնիժաս

Էկլադեն -- (Ձախ կողմի սեղանին ֆոյ նրսած, ձեռքի գրովը գրադած է): Սա վէպերէն ա՛լ ձանձրացայ, հակառակ այնքան զուարճութեան փոփաքելուս, չես կրնար զուարճանալ. (կելի եւ աջակողմանի սեղանին կը նայի) սա ծաղիկներն ալ չորս օրուան են. չեմ դիտեր թէ Պոնիժասին խելքը ո՞ւր է գացեր, (զանգակը կը զարնէ. Պոնիժաս ներս կը մտնէ) սա ծաղիկները փոխէ: Պոնիժաս. — Շատ լաւ, օրիորդ, (դէպի սեղանը զացած ասէն) օրիորդ ներեցէք, հայրերնիդ հո՞ս է արդեօք:

Էկլադեն — Ի՞նչ կայ, մէ՞կը եկաւ:

Պոնիժաս — Ոչ օրիորդ, նամակ մը կայ:

Էկլադեն — Հայրս ալ նամակէ դատ ուրիշ բանով հրազիր, մէկու մը հետ չի տեսնուիր:

Պօնիֆատ — Այո՛, օրիորդ, խուլնս լէն ի վեր երեք ասորի անցած է և պարոն Տամուաչօ ոչ մէկուն հետ տեսնուիլ կ'ուզէ: (Ճաղիկները պատահանեն կը նետէ:)

Էկլադէն — Հօրս այս վիճակէն չես գիտեր ո՛րչափ կը նեղուիմ, Պօնիֆատ:

Պօնիֆատ — (Ծաղկամանը մաքրելով) Ես ալ այնպէս օրիորդ, ես ալ, պարոն Տամուաչօ այս դժբաղդութեան ենթարկուելէն իվեր ես ալ շատ դժուարութիւններու կը հանդիպիմ, ձայնս խորթ ըլլալուն՝ զիս իր քով ծառայութեան ընդունեց, որով ամէն օր իրեն հետ խօսելու ստիպուած եմ, խօսած ատենս ալ եթէ ամենէն գաղտնի բան մըն ալ ըլլայ, պէտք է որ մունետիկի պէս պօռամ. աս ծառայութիւն չէ, այլ տանջտնջ:

Էկլադէն — Հապա խուլերու բժիշկին դիմած էր, ի՞նչ եղաւ:

Պօնիֆատ — Պատասխան անդամ չի տուաւ. ի՞նչպէս ընելու է չեմ գիտեր, ասկէ վերջ բանսօմիւմ խաղացողներուն պէս նշաններով պիտի խօսի՞ք, և այնպէս կամաց կամաց ալ արհեստնիս պիտի փոխենք. (Էկլադէն կը խնդայ.) Դուք թէեւ կը խնդաք, բայց օրիորդ, ես միշտ կը վախնամ որ այսպէս պօռալով կոկորդային ամենագէշ հիւանդութեան մք ենթարկուիմ, այն ատեն ինձի ո՞վ պիտի խնամէ:

Էկլադէն — Ես ալ միշտ չեմ խնդար ա՛, բայց Պօնիֆատ չես ըսեր թէ տասներինը ատրե-

կան աղջիկ մը ըլլալովս, այսպէս տան մէջ բանտարկուած մնացած եմ, ի՞նչ պիտի ըլլայ իմ վախճանս, ի՞նչ ընեմ...

Պօնիֆատ — Շիտակը ըսելով, եթէ ես ձեր տէղը ըլլամ, ընաւ չեմ կրնար գիմանալ. ասկէ զատ, ես անանկ կրակոտ եմ որ եթէ աղջիկ ծնած ըլլայի... ա՛խ...:

Էկլադէն — Հապա հայրս որ բնաւ զիս ամուսնացնել չուզեր և բոլոր զիս ուզողները կը մերժէ...:

Պօնիֆատ — Ամէն ցերեկայացողներուն համար ալ, աս իմ սեղան փեսացուս չէ կ'ըսէ. չես գիտեր թէ այս մարդը ի՞նչ տեսակ փեսայ փնտռելու վրայ է:

Էկլադէն — Երանի՛ թէ Տիկին Գարօլինի պարահանդէսին մէջ տեսած երիտասարդը ընդունէր... կարծեմ ժամանակս ալ հասած է:

Պօնիֆատ — (Դուրսէն Տամուաչօի հագալը լսելով) Ո՛չ թէ հասած, այլ անցած է. իսկ անհապարոնը եկաւ, նամակը ո՞ւր դրի, հա՛ հոս է եղեր:

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք եւ Տամուաչօ

Տամուաչօ — (Ձեռքը գիրք մը մտնելով) Խլութիւնը մարդուս համար շատ դժուարին և շատ գէշ պակասութիւն մըն է:

Պօնիֆատ — Այո՛ պարոն, այնպէս է:

Տամուաչօ — Իբր թէ մէկը կալվանիզմով...
Պօնիֆաս — (Բարձր ձայնով) Պարոն, պարոն, ձեզի նամակ կը կայ: (նամակը Տամուաչօյի փոքր կը խօթէ):

Տամուաչօ — Վա՛յ, Պօնիֆաս, դուն ալ հո՞ս ես, աղջիկս: (Պօնիֆասին) Ինչու համար նամակ կայ չըսիր:
Էկլադէն — Ա՛հ, ուսին վրայէն ես ալ կը կարդամ:

Պօնիֆաս — Նեղուելու հարկ չկայ, օրիորդ, ես անոր բնաւորութիւնը գիտեմ. կարծելով թէ մտքէն կը կարդայ, ակամայ կը պոռայ, որովհետեւ իր ձայնը չի լսեր, մինչեւ իսկ իր մտածումներուն տեղեակ եմ. աս մեր զործին շատ լաւ կուզայ:

Տամուաչօ — (Էկլադէնին իր կոնակին նամակ կարդալը տեսնելով) Վա՛յ անամօթ, վա՛յ, այս նամակը ինծի գրուած է, կարիւր է դաղանի բան մը կայ, (կը կարդայ) «Սիրելի բարեկամս ձեր աղջկան ամէն կերպով յարմար և արժանի երիտասարդ մը... (նամակը կը նմոթկէ):

Պօն. — Օրիորդ, Չըսի՞ քեզի:

Տամուաչօ — Ոչ, մինչեւ որ իմ փնտրած փեսացուս չգտնեմ, աղջիկս չեմ ամուսնացներ:

Պօն. — Նորէն նոյն պատասխանը:

Էկլադէն — Ա՛հ, Պօնիֆաս, այսպէս ի՞նչ պիտի ըլլայ իմ վերջս...:

Պօն. — Մի՛ յուսահատիք, մի՛ յուզուիք

օրիորդ օր մը Աստուած պիտի ողորմի ձեզի, (Էկլադէն լալով կը մեկնի):

Տամուաչօ — Հարկաւ օր մը իմ ուղած ու փնտրած փեսացուս կը գտնեմ. (Պօնիֆաս դուրս կ'ելլէ, Տամուաչօ ձախ կողմը նստելով ձեռքի գիրքը կը կարդայ) Ականջի մէջի թմբուկ կոչուած մաշկը հաստ կամ ծակ... անգամ մը նայինք: (մասները ականջները կը խօթէ) Եթէ ականջի մաշկը պատուած ըլլայ... Արդեօք պատուած է, Պօնիֆա՛ս, Պօնիֆա՛ս:

ՏԵՍԻԼ Գ.

Տամուաչօ եւ Պօնիֆաս

Պօն. — (Ներս մտած ասեմ կ'լլնայ, ձեռք գնում ծաղիկները եւ ծաղկամանը կը կոտրին, Տամուաչօ չի լսէ) Վա՛յ, գետինը անցնի դուն ալ, Պօնիֆասդ ալ. քիչ մնաց որ քիթս ու բերանս իրարմէ բաժնուէին, և սա մեր պարոն աւանակապետը՝ հակառակ թնդանօթի որոտմունքի չափ եղած սա աղմուկներէն բան մըն ալ չի լսեց. միշտ այսպէս է, ուղածիդ չափ բան կտորէ, և փոխանակ զող ելլելու, վրան նայէ հրճուէ, ան չի լսելէ ետքը... որո՞ւ հոգն է:

Տամ. — Պօնիֆաս, Պօնիֆաս:

Պօն. — (Կոտրածները ժողուելով) Կոկորդդ պատուելու չափ կ'ուզես պոռայ, կ'ուզես զոս՝, աւանակ:

Տամ. — Պօնիֆա՛ս, Պօնիֆա՛ս:

Պօն. — Գետնին տակը անցնիս, պէ մարդ,
քե՞զ մտիկ պիտի ընենք, մինչեւ որ սա կտոր-
ները չժողուես, պատառիսան չե՛մ կրնար տալ:
(կտորները պատուհանէն կը նետէ) Օհօ՛, վարը
մարդ չըլլայ՛... .

Տամուաչօ — Կ'երեւի թէ սա մեր Պօնի-
ֆասն ականջի ախաէն վարակուած է, բան մը որ
չիտակը ըսելով, իմին ալ ուզած ու փափաքածս
է: Չպիտի ըլլայ, երթամ զինքը փնտրե՛մ, տես-
նեմ անպիտանը ո՛ր ծակէն պիտի հանեմ նօրէն:

Պօն. — Բերնէդ ելլէ վրադ թափի, վայ-
բերան թշուառական, և մուկի պէս ծակերուն,
մէջ սասկիս:

Տամուաչօ — (Իւրձած ասեմ Պօնիֆասը
սեսնելով, կամաց մը) Ա՛, հոս է եղեր, (բարձր
Պօնիֆաս, Պօնիֆաս:

Պօն. — (Վախնալով) Հէ՛, խերդ անիծեմ,
մարդ այսչափ ալ կը վախցնեն՛ս:

Տամ. — Չորս անգամ է քեզ կը կանչեմ,
չես լսեր, խուլ եղար:

Պօն. — Այո՛, պարոն, խուլ եղայ:

Տամ. — Ի՞նչ կ'ըսես որ չե՛մ հասկնար:

Պօն. — Քեզի հասկցնելու համար թնդանօ-
թի բերնով խօսելու է, պարոն կովիանոս:

Տամ. — Ի՞նչպէս:

Պօն. — Ինչպէս պիտի ըլլայ, էշ ես, անբան
ես, կով ես, անդդայ ես... .

Տամ. — Հարկաւ. հարկաւ, ես եթէ ամէն ինչ
խորհելով չընեմ բանս բուրդ է. . . Պօնիֆա՛ս:

եկուր նայէ, սա ականջիս թմբուկը արդեօք
պատռած է:

Պօն. — Թմբուկ մը, թմբուկը ի՞նչ պիտի
ընես:

Տամ. — (Մօտենալով) Նայէ՛ թմբուկը պատ-
ռած է:

Պօն. — Ինձի՞ էք:

Տամ. — (Ականջը ցուցնելով) Թմբուկը պատ-
ռած է:

Պօն. — (Նայելով) Ականջին մէջ թմբուկ
կ'ըլլայ՞ եղեր... . տարօրինակ բան... .:

Տամ. — Լուս՞մ, հէ՞:

Պօն. — Ես բան մը տեսած չունիմ:

Տամ. — Ի՞նչ կ'ըսես:

Պօն. — (Պօռալով) Բան մը տեսած չունիմ
ես:

Տամ. — Ի՞նչ կ'ըսես, ձայնդ մարած է,
ի՞նչ է:

Պօն. — Աստուած խելք տայ:

Տամ. — Կրնօյ ըլլալ: Պօնիֆաս, դուն խե-
լացի ես:

Պօն. — Այո՛:

Տամ. — Հաւատարիմ ես:

Պօն. — Երբէք:

Տամ. — Այս առաւօտ ի՞նչ պիտի ուտէի,
հա՛, կաքաւ:

Պօն. — Այո՛, պարոնը կաքաւ պիտի ուտէ:

Տամ. — Ես այս առտու ի՞նչ պիտի ուտեմ:

Պօն. — Կրողս պիտի ուտես... (պօռալով)
կաքաւ, կաքաւ պիտի ուտէք...:

Տաւ. — Հա՛, ի՞նչ ուշիմ ես Պօնիֆաս, ես,
քու այս ծառայութեանդ փոխարէն իմ կտակիս
մէջ քեզի ալ մաս մը պիտի յատկացնեմ, բայց
ո՛րչափ ըլլալը չեմ ըսեր, բաժին մը պիտի ունե-
նաս իմ ձգելիք կտակիս մէջ. այսչափ:

Պօն. — Ուրիշի մը հազար ֆրանքի հարըս-
տութեան յոյսը եթէ չունենայի... (դուրսէն հրա-
ցանի մը ձայն) ի՞նչ ձայն է ան, (դիպի պասու-
հան կը վազէ):

Տաւ. — Խե՛ր ըլլայ, Պօնիֆաս, առ հարբուխը
ո՛ւրկէ առիր:

Պօն. — (Պասուհանէն նայելով) Ան ի՞նչ է,
որսորդներ եկեր են: Է՛յ, ինձի նայեցէք, հոս
լեռ չէ, այստեղը տէր ունի, հոս արգիլուած է...
Հէ՛յ...:

Տաւ. — Ի՞նչ կայ հոտ, ի՞նչ կ'ընես:

Պօն. — Որսորդ մը, դողեր ետեւէն ինկեր
են, հէ՛յ մարդ, պարտէզը մի աւրչտկեր: (պօ-
ռալով) Հէ՛յ...:

Տաւ. — (Պօնիֆասին ետեւէն նայելով) Ա՛յ,
ա՛յ, ա՛յ, ամբողջ պարտէզը աւրչտկեց, վազէ՛,
Պօնիֆաս:

Պօն. — Առաջ դուք անցէք պարոն, (դուրս
կ'ելլեն, այս միջոցին Բլասիս ձեռքը հրացանով
եւ որսորդի հագուստով կուգայ նստանալով,
ու սենեակին չորս դիմ բան փնտնելի վերջ, ձեռքի
րացանը սեղանին վրայ կը դնէ):

ՏԵՍԻԼ Դ.

Բլասիս

Բլասիս — Չկայ, բան մը չկայ, մութ տեղ
մը. նապաստակին ետեւէն հինգ ժամ վաղեցի,
գոնէ ձեռք անցնելու կարող ըլլայի... չկայ...
մէկ ֆրանքի կրնայի գնել այդ նապաստակը.
հոգ չէ մէկ ֆրանք 75 սանթիմ, 1 ֆրանք 80
սանթիմ կուտամ, թող ձեր խօսքը ըլլայ, շուն-
չանորդի նապաստակին ետեւէն վաղելով վաղե-
լով այն աստիճան յոգնեցայ որ, ոտքերուս
վրայ չէի կրնալ կոխել (հրացանը սեղանին
կրքնցնելով), Հրացանս այսպէս կրթնցուցի. ես
ալ հոն գտնուած ծառի մը բունին կրթնեցայ
մնացի... մէյ մըն ալ նայեցայ որ Պիրենեան
լեռները ելեր եմ, իմ երեւակայած նապաստա-
կիս ետեւէն ինկած վազն ի վաղ մինչեւ ձիւ-
րալթար հասեր եմ, անպիտան նապաստակը
ծովը ցատկեց, անպիտան... բայց այս սարսու-
ռէն սթափելով տեսայ, թէ բնաւ յոգնած չէի.
որովհետեւ երազի մէջ վազած էի. Այքերս հա-
զիւ թէ բացած էի, մէյ մըն ալ ի՞նչ կուզէք
որ տեսնեմ, մեր նապաստակը սանկ հրացանէս
երեքուկէս մէթր հեռու կաղամբ մը ուտելու
զբաղած էր. անմիջապէս օրհեալ գործիքս
ձեռք առի, բայց նապաստակը զիս տեսնելով
սկսաւ վաղել, ես ալ ետեւէն վաղեցի. հեռուն

գիւղացի մը տեսայ, զարկ պոռացի, քեզի մէկ
 ֆրանք նուէր կուտամ. գիւղացին նապաստակը
 չտեսաւ, ես դարձեալ սկսայ ետեւէն վազել.
 անպիտան կենդանին բարձր քարէ մը վար
 ցատկեց, ես ալ ետեւէն հօփլա՛ ընելու վրայ
 էի... բայց ես անոր չափ գիւրու թեամբ չէի
 կրնար ցատկել, որովհետեւ անոր պէս ես ալ
 ետեւի ոտքեր չունէի, և կոնակի վրայ փոռե-
 ցայ մնացի. բարկութիւնս սաստիկ էր, ետեւէն
 կրակ ըրի, մէյ մըն ալ նայեցայ որ տեսակ տե-
 սակ մարդեր ձեռքերնին բահերով, բրիչներով
 կուգան, փախայ մտայ հոս, և այս որսորդու-
 թենէն այնքան բան կորսնցուցի որ... հիմա
 այդ մէկ ֆրանք 80 սանթիմ արժող նապաստա-
 կին համար ձերբակալուիլ, բանտարկուիլ կ'ըլ-
 լա՞յ մի եա՛... (դուրսէն պողչուփի ձայնե՛ր)
 Ա՛հ, Աստուած իմ, բռնուեցա՛նք:

ՏԵՍԻԼ Ե.

Բլաւիս, Տամուաչօ, Պօնիֆաս, եւ Պարսիգպան մը

Պարսիգպան — (Տամուաչօին) Ահաւասիկ,
 պարոն, աս է:

Տամ. — (Բլաւիսը ցուցնելով) Շուտով բռ-
 նեցէ՛ք և թեւերը կապեցէ՛ք:

Բլաւիս — Ի՞նչպէս:

Պարսիգպան — Ըստ օրինի պէտք է հպա-
 տակիք մեզի (հրացանը ձեռքէն կառնէ):

Տամ. — Պարոն, ի՞նչ իրաւունք ունիք
 պարտէզս մտնելով հրացան պարպելու:

Պօն. — Չի մտածեցի թէ մարդ մը կրնայ
 վիրաւորուիլ: Աստուած մի արասցէ, եթէ մեր
 պարոն Տամուաչօն պարտէզը գտնուելով, ուղե-
 զը պայթէր... (մեկուսի) Թերեւս մարդուն
 ականջին ալ դարման մը ըլլար:

Տամ. — Անուննի՞դ, անուննի՞դ:

Պարսիգպան — Անուննի՞դ:

Պօն. — Այո՛, պարոն անուննիդ շուտով
 ըսելու էք, թէ ոչ...:

Բլաւիս — Անունս... բան...:

Պօն. — (Տամուաչօի ախանջէն պօռալով)
 Անունը բան է եղեր, անպատճառ այս մարդը
 Բոլոնեացի է:

Տամ. — Այդպէ՛ս, հա՞...:

Բլաւիս — (մեկուսի) Բոլոնեացի՞... (բար-
 ձր) է, ի՞նչ կայ, բսնք թէ Բոլոնեացի եմ:

Պօն. — (Բլաւիսի) Հոս մտնելը արգիլուած
 է, այս տեղը իր աէրը ունի ես չըսի՞ քեզի, չի
 լսեցի՞ր, խո՞ւլ ես...:

Բլաւիս — (մեկուսի) Միտքս բան մը եկաւ:

Տամ. — Ի՞նչ կ'ըսէ:

Պօն. — (Պօռալով) Բան մը ըսած չունի:

Բլաւիս — (Նշանացի հասկցնելով քի բան մը
 գրել կ'ուզէ) Կտոր մը թուղթ և գրիչ և կու-
 տա՞ք:

Պօն. — (Ջարմացած) Թուղթ գրի՞չ մի՛.
Թուղթ գրիչը յ՞նչ պիտի ընես:

Տամ. — Ի՞նչ կ'ընէ:

Պօն. — Թուղթ գրիչ կ'ուզէ: (Բլասիսի գրասեղանին առջեւ կ'երթայ եւ կ'սկսի գրել): Հոտ ի՞նչ պիտի ընես, բարեկամ, հէ՛յո...:

Բլասիս — (Գրած քուղբը երկնցնելով)
Առէ՛ք:

Տամ. — Դուն ամբողջ պարտէզս տակնու-
վրայ ըրիր:

Պօն. (Բլասիսէն քուղբը առնելով եւ Տամուաջօի երկարելով) Կարգացէ՛ք:

Տամ. — (Թուղբը առնելով) Աս ի՞նչ է...
(կը կարգայ) «Ես չափազանց խուլ ըլլալուս...
(ուրախութեամբ) Խո՞ւլ մի՛:

Ամենքը — Խո՞ւլ մի... (պարսիգպանը կը
մեկնի):

Տամ. — Ա՛հ, Պօնիֆաս, իմ այսքան ատենէ
ի վեր փնտռած փեսացուս աս է:

Պօն. — (Շփոթած) Ի՞նչ...

Տամ. — (Բլասիսի մօտեցալով) Պարոն, խուլ
էք, այնպէս չէ՞... չի լսեր, օ՛հ ի՞նչ երջանկու-
թիւն, (ուսին գարնելով) Խուլ էք; չէ՞...

Բլասիս — (Զի լսել ձեւացնելով) Այո՛ Պի-
ղօն վարժարանին աշակերտներէն եմ, (մեկուսի)
վա՛յ չունշանորդի, սխալ ըսի, այդ կոյրերուն
զպրօցն է:

Պօն. — (մեկուսի) Իր փնտռած փեսացուն
աս է եղեր:

Տամ. — Ա՛հ, կ'նչ բախտ, ի՞նչ երջանկու-
թիւն, (մեծարելով) Հրամմեցէք, պարոն, հրամ-
մեցէք, նստեցէք խնդրեմ, (Բլասիս չի լսել կը
ձեւացնէ, յետոյ Տամուաջօ նստելու համար նստն
կ'ընէ:

Բլասիս — Նախ գուք նստեցէք, պարոն, ես
այ կը նստիմ:

Տամ. — (մեկուսի) Ի՞նչ վայելուչ երիտասարդ
իր խելքը և ուշիմութիւնը դէմքէն յայտնի է:

Բլասիս — (մեկուսի) Աս մարդը ի՛նչ խուլ ըլ-
լալուս է որդիս կը յարդէթէ Բոլոնեացի ըլլալուս:

Պօն. — Ազէկ ա՛, ես աս երկու խուլերուն
հետ ի՞նչ պիտի ընեմ, մէկը չէր բաւէր, աս ալ
եկաւ գլխուս:

Տամ. — (Բլասիսի) Պարոն, ամուրի էք,
այնպէս չէ՞:

Բլասիս — (Կամոց) Այո՛:

Տամ. — Արդեօք ամուրի՞ էք, ամուսնա-
ցած էք:

Բլասիս — Ո՛չ:

Պօն. — Օ՛հօ, ամուրի է եղեր աւանակը:

Տամ. — (Բլասիսի) Ամուրի՞ էք:

Բլասիս — (Պօնալով) Այո՛, (մեկուսի)
Աս որչափ ալ խուլ է:

Տամ — Պարոն, ինձի հետ ճաշելու կը բա-
րեհաճի՞ք:

Բլասիս — Ամենայն սիրով, պարոն:

Տամ. — Կը կատակէ՞ք, պարոն, (Պօնիճա-

սից) շուտ, մեզի կերակուր պատրաստէ, բայց
երեք հոգիի համար (պօռալով) երեք հոգիի
համար:

Պօն. — Շատ լաւ, պարոն Կով...

Տամ. — Կը հասկնա՞ս, երեք հոգիի համար:

Պօն. — Շատ լաւ, պարոն աւանակապետ,
շատ լաւ:

Տամ. — Է՛, շուտ, քեզ տեսնեմ, Պօնիֆաս:

Պօն. — Եթէ հարստութենէդ մաս մըն ալ
ինձի յատկացնելու յոյսը չունենայի, գիտէի
ընելիքս (կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Զ.

Բլասիս եւ Տամուաչօ

Տամ. — (Կ'ելլէ դուռները կը գոցէ, Բլասիսի
հովը կը նստի եւ պօռալով) Պարոն, ձեզի հետ
գաղտնի կերպով խօսիլ կ'ուզեմ:

Բլասիս — (մեկուսի) Գաղտնի խօսիլը այս-
պէս է նէ, արդեօք այս մարդուն պօռալով խօ-
սիլը ին՞չ է:

Տամ. — Պարոն, դուք ամուրի էք, ես ալ
աղջկան հաշր. փառք Աստուծոյ, խուլ ալ էք,
աղջիկս ձեզի կնութեան տալ կը փափաքիմ:

Բլասիս — (մեկուսի) Զնպատճառ կուզ ըլ-
լալու է:

Տամ. — Հարկաւ 300,000 ֆրանք ալ օժիտ:

Բլասիս — Ի՞նչպէս, եթէ այդչափ օժիտ

ունենայ, կուզ մըն ալ կուրծքէն ունենալու է
(ոսէի կ'ելլէ):

Տամ. — Աղջիկս շատ գեղեցիկ է, և եթէ,
աշխարհիս ամենէն հարուստը կնութեան ուզեր,
չէի տար:

Բլասիս — Եթէ անգամ մը սրկէ փախչի:

Տամ. — Ըսենք որ եթէ հիմա աղջիկս խուլ
չեղողի մը տամ, անոնց խօսած ատեն բան մը
չպիտի կրնամ հասկնալ, պիտի հետաքրքրուիմ,
հասկնալ պիտի ուզեմ, պիտի ըսեն կամ չպիտի
ըսեն, մէջերնիս միշտ կօխներ պիտի ունենանք,
վերջապէս աղէկ չպիտի ըլլայ:

Բլասիս — (մեկուսի) Աղջիկդ ալ քեզի պէս
պաղ զաւակին մէկը ըլլալու է անպատճառ:

Տամ. — Անանկ է ես, պիտի հետաքրքրուիմ
երկու կողմէ ալ դժուարութիւն. ասոր համար
որոշեցի որ աղջիկս խուլ երիտասարդի մը տամ:

ՏԵՍԻԼ Է.

Բլասիս, Տամուաչօ եւ Պօնիֆաս

Պօն. — (մեկուսի) Երկու խուլերու մէջ
մնացինք:

Բլասիս — (Տամուաչօի) Է՛հ, հիմակուհիմա
բաժնուինք, պարոն, նորէն կը տեսնուինք:

Տամ. — Պարտէզը վերջն ալ կը շտկենք սի-
րելիս, հիմա դուն սա սենեակը մօտի բե վրադ
զլուխդ չպէ՛ս արմատեւ աղջիկս պիտի գայ:

2700 P



կարելի եղածին չափ դեղեցկացէք :

Բլասիս — Աս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք, ազատում չկայ, մտնելու է (կ'երթայ) :

Տամ. — (մեկուսի) Հարկաւ օր մը իմ փնտոած փեսացուս պիտի գտնեմ կ'ըսէի, (Պօնիֆասսը սեսնելով) Վա՛յ, Պօնիֆասս, դուն ես, այդ ձեռքիդ քառթը ի՞նչ է :

Պօն. — Ձեզի հետ տեսնուիլ փափաքողի մը քառթն է (կուտայ) :

Տամ. — (Պօնասով) Ա՛հ, ի՞նչ երջանկութիւն... :

Պօն. — Ի՞նչ կայ, ի՞նչ եզար :

Տամ. — (Ուրախ) Ինքն է, ինքը վերջապէս եկաւ :

Պօն. — Ո՞վ եկաւ :

Տամ — Ա՛հ, Պօնիֆասս, այսօր մեզի համար երջանկաբեր օր մը եղաւ (կ'երթայ) :

ՏԵՍԻԼ Ը.

Էկլադէն, Պօնիֆասս, յետոյ Բլասիս

Էկլադէն — Պօնիֆասս, հայրս ի՞նչ է եղեր :

Պօն. — Ի՞նչ պիտի ըլլայ, իր փնտոած փեսացուն գտեր է :

Էկլադէն — Ի՞նչ... :

Պօն. — Ինչը մի՞նչը չկայ, երկու խուլերուն մէջ մնացինք :

Էկլադէն — Է՛, պարօնը ո՞ւր է :

Պօն. — (Ձախ կողմը ցուցնելով) Հո՛ն ձեզ աննեյու պատրաստութիւններ կը տեսնէ :

Էկլադէն — Դուն զի՞նքը տեսա՞ր :

Պօն. — Այո՛ :

Էկլադէն — Ի՞նչ տեսակ մարդ է, երիտասա՞րդ է :

Պօն. — Ի՞նչ տեսակ մարդ է մի, տեսակը հիչ մի հարցնէք : Օրիորդ, ես անոր քով հրեշտակ մըն եմ. վերջապէս բանի մըն ալ չկրցի նմանցնել զայն :

Էկլադէն — Ձիս կը վախցնես, Պօնիֆասս :

Պօն — Շիտակը, վախնալիք բան է. նախ իր խլութիւնովը ձեր հօրմէզ տարբերութիւն չունի :

Էկլադէն — Է՛, վերջը :

Պօն. — Վերջը, օրիորդ, աղէկութիւն մըն ալ կայ որ... :

Էկլադէն — Ի՞նչ... :

Պօն. — Ի՞նչ պիտի ըլլայ, ձեր փեսացուն քով հայրերնիդ ձանձին բղղալը կարող է լսել :

Էկլադէն — Ատուռոյ սիրուն ինչե՛ր կ'ըսես Պօնիֆասս :

Պօն. — Աս աս է օրիորդ. ձեզ երջանկացնելու համար, ձեր հայրը միտքը դրած, տարիներէ ի վեր փնտոած և ձեզի համար յարմար դատած ամուսինը այս տեսակ մարդ մըն է եղեր :

Էկլադէն — Ես ալ զի՞նք չեմ ուզեր :

Պօն. — Հա՛, այսպէս, ասանկ հաստատ կեցիք, էրիկ մարդու պէս եղէք, ձեր ուզած մարդը մինչեւ որ չի գտնէք, հաւանութիւն մի տաք :

Էկլիպսին — Հարկաւ, ես մինչեւ որ ուզած մարդս չի գտնեմ, չեմ ամուսնանար:

Պօն. — Տեսնելու էք օրիորդ, կարծես իր տան մէջ գտնուածի պէս փողկապը շտկելու զբազած է:

Էկլիպսին — Ո՛հ, չպիտի ընդունիմ չէ, չէ, չէ:

Պօն. — (Զեռէր իբարու օփելով) Կեցցե՛ս, օրիորդ Էկլիպսին, հիմա այդ ապուշը կերակուրին սեղանը չի նստած և ապուրը չեփած, պոչէն բռնելու, փողոց նետելու է:

Էկլիպսին — Փոխանակ զիս սիրտիս սիրած մէկուն հետ ամուսնացնելու, ելեր իրեն պէս խուլին մէկուն տալ կ'ուզէ, հէ՛, չէ հայր, այդ բամբակը ականջէդ հանէ...

Պօն. — Աւանակր. շիտակը օրիորդ, եթէ ես ատանկ անխիղճ հայր մը ունենամ, առանց խղճահարելու, կոկորդէն բռնելուս պէս կը խեղդեմ: Երթամ սա ապուշ փեսացունիս կանչեմ...

(ձախ դուռէն նայելով) Օ՛, հայելիին առջեւ կայներ փողկապը կը կապէ... կապիկի պէս ալ քիթը բերանը կը խաղցնէ... վա՛յ ապուշ վա՛յ... խեղճը չի գիտեր որ շունի պէս փողոց պիտի նետուի, հը՛շտ միւսի բան... մէկը եկեր ձեզ հետ տեսուիլ կ'ուզէ... եթէ կարելի է քիչ մը շուտով եկէք, (Էկլիպսինին) հա չի մոռնամ ըսել թէ այս մարդը Բոլոնիացի է եղեր, և դուք ատանկ մէկու մը կ'ինք պիտի ըլլաք հէ, հա՛, հա՛, հա՛, խնդամ գոնէ:

Իլասիս — (Մտնելով) Ա՛հ, ինչպէ՞ս, դուք, Էկլիպսին...

Էկլիպսին — (Զարմացած) Ա՛հ, դուք հո՛ս, ինչպէ՞ս...

Պօն. — (Ապած) Աս ի՞նչ է... իրար կը ճանչնան...

Էկլիպսին — (Պօնիձասին) Հապա դուն ի՞նչ կ'ըսէիր: այս պարոնը խուլ չէ և...

Իլասիս — (Մեկուսի) Հիմա դորձը պիտի գէշնայ...

Պօն. — Քիչ մը համբերէ, խուլ ըլլալը կամ չըլլալը պիտի հասկնաս:

Իլասիս — Այո՛, ձիշտ է օրիորդ, երբեմն խուլ կ'ըլլամ որովհետեւ օր մը ինչպէս եղաւ, ձիէն վար ինկայ և գլխիվար ինկայ, ահա այն օրուրնէ ի վեր չեմ լսեր:

Էկլիպսին — Խեղճ Իլասիս...

Պօն. — (Անտաքեք կերպով) Պարտն, օրիորդին աչքը մտնելու համար թէև ձեր փողկապը շատ ուշ կապեցիք, բայց օրիորդը ձեզի չուզեր կոր և իմ մեծապատուութեանս միջոցաւ առօք փառօք զձեր մեծութիւնը պիտի վստահէ:

Էկլիպսին — Պօնիձաս...

Պօն. — Հոգ մի ընէք օրիորդ, ան չի լսեր: (Իլասիսի) սանկ ունեցածդ և չունեցածդ ժողուելով ճամբադ գնա, տեսնեմ, չէնէ, հա՛...

Իլասիս — (Մեկուսի) Սա ապուշ մարդուն ըսածներուն այնքան կը բարկանամ որ... կըռնակին կից մը պիտի տամ: (Էկլիպսինի բարձր) Արդեօք օրիորդը խնդրանքս պիտի ընդունի՞...

Պօն. — (Խնդարով) Հա՛, հա՛, հա՛:

Էկլիպսէն — (Ոսկր գետինը զարնելով) Պօնիֆա՛ս:

Պօն. — (Խնդարով) Հա՛, հա՛, հա՛, զի՛նքը կը ծափահարեմ, պիտի կարծէ:

Էկլիպսէն — Պօնիֆաս, ի՞նչ կ'ընես, Տիկիրն Գարօլինի պարահանդէսին մէջ տեսած երիտասարդս աս է:

Պօն. — Ի՞նչ, իրա՞ւ կ'ըսէք:

Բլասիս — (Էկլիպսէնի) Ըսէք, ըսէք այդ տխմարին թէ այս խուլը ձեր ձայնը կարող է լսել:

Պօն. — Իրա՞ւ կ'ըսէք:

Բլասիս — Ահաւասիկ «իրաւ» ըսիք, ձեր չրթուներուն շարժումէն հասկցայ:

Պօն. — Աս ի՞նչ դարձանալի բան է, արդեօք այս մարդը իր աչքերէն կ'ը լսէ:

Էկլիպսէն — Ա՛հ, Պօնիֆաս կ'իմանայ:

Պօն. — Հոգ մի ըներ օրիորդ, ան չի լսեր. դիպուածով բան մըն էր ըսաւ...

Բլասիս — Վա՛յ ապուշ, վա՛յ...

Էկլիպսէն — Խուլ ամուսին մը... ան, երբեք, երբեք: (կը մեկնի):

ՏԵՍԱՐԱՆ Ք.

Բլասիս եւ Պօնիֆաս

Բլասիսը — (Էկլիպսէնի ետեւէն մեկ երկու քայլ կ'երթայ ու կը կենայ) Ա՛հ, գնաց:

Պօն. — (Խնդարով) Այո՛, խեղճէ քօքօզ պարոն, գնա՛ց, թո՛ւ ետ՛, ի՞նչ կարծեցիր, կ'առնէիր մի՞...:

Բլասիս — (Բարկուքեամբ) Լռէ՛...:

Պօն. — Նախ սա տնկած ականջներդ բա՛ց եւ ապա ամուսնացիր հասկցա՛ր... վերջը տակէն աղէկ բան չելլեր, իմ պիտիլիկ կապիկս...:

Բլասիս — (Ձարնելով) Առ քեզի տնկած ականջ, առ քեզի կապիկ, առ քեզի չիյտէմ ինչ, հասկցա՛ր հիմա:

Պօն. — Վա՛յ չունչանորդի, խուլը կը լսէ...:

Բլասիս — (Պօնիֆասի քեւեմ քաշելով) Այո՛ կը լսեմ, բայց եթէ իմ լսելուս մասին բերնէ բառ մը հանես, դիտցած ըլլաս որ Աստուած հոն գործ չունի հա՛, ինքզինքդ չիկայէն սեպէ, ձեծին տակ մէկ կողմդ կը կոտրեմ:

Պօն. — Ա՛հ, կ'աղաչեմ պարոն, վերջը եթէ ձերանալ, վիճակս ի՞նչ կ'ըլլայ... պարոն Տամուաչօ իր կտակին մէջ միայն 1200 Ֆրանքի բաժին պիտի հանէ, մէկ կուտ աւելի յոյս չունիմ:

Բլասիս — Հա՛, եթէ այդպէս է, ուրեմն աղէկ մտիկ ըրէ զիս, այս գործին մէջ պէտք է օգնես ինձի:

Պօն. — Բայց... պարոն բան, (մեկուսի) քանի որ խուլ չէ, իմ գործիս կուգայ: (բարձր) կ'ընդունիմ ձեր առաջարկը, պարոն, (դուրսէն Տամուաչօ կը հագայ) պարոնը կուգայ, զո՛ւշացէք, որովհետեւ Ամերիկեան կապիկի մը չափ խորամանկ է... եթէ զաղտնիքնիդ հասկնայ... վերջը բաներնիդ բուսած է:

Բլասիս — Դուն գործդ նայէ, ես անանկ խուլ մը կ'ըլլամ որ դուն անգամ կը տարակուսիս:

Պօն. — (Իլլախիք մեկ կողմ քաւելով) Հիմա պիտի ճաշէ, ես խոհանոց կ'երթամ, դուք ալ պարտէզ իջէք, ճաշի համար եթէ զանգակ զարնեմ, չըլլայ թէ լսելով, զալու պատրաստութիւն վերջը գէշ կ'ըլլայ:

Իլլախիս — Էկլաղէնի սիրուն համար եթէ ականջիս տակը թնդանօթ ալ նետէն, չեմ լսեր (կերքայ):

Պօն. — (Ետեւեւն) Ես կուգամ ձեզ կը գտնեմ: (Շտապով դուրս կ'ելլէ):

ՏԵՍԻԼ Ժ.

Տամուաչօ

Տամ. — (Մտնելով) Կը լսեմ, կը լսեմ, կեցցէ՛ ելեքտրական վալվանիզմը, ա՛հ, ի՞նչ ազուտոր կը լսեմ, այդ ապուշ կոչած մարդս կալվանիզմով ականջները բացաւ, ի՞նչ երջանկութիւն...

ՏԵՍԻԼ ԺԱ.

Տամուաչօ եւ Էկլաղէն

Էկլաղէն — Հա՛յր:

Տամ. — Եկուր աղջիկս, եկուր, ականջներս կը լսեն. չատ ազուտոր կը լսեն:

Էկլաղէն — Ի՞նչ, իրա՞ւ կ'ըսես, հայր:

Տամ. — Կամաց, աղջիկս կամաց խօսէ՛:

Էկլաղէն — (Քիչ մը ցած) Այնպէս վարձուած եմ...

Տամ. — Օհօ՛, աւելի կտմաց. աւելի կամաց: Էկլաղէն — Հայր, ի՞նչպէս եզաւ որ ականջներդ բացուեցաւ:

Տամ. — Այդ ապուշ ըսած մարդերնիս բժշկեց. (Իեպի ձախ երթալով) նոյն, աղջիկս, այն երիտասարդը որ ինձի փեսայ պիտի ընէի, ճամբելու է, որովհետեւ միտքս փոխեցի, կարելի չէ որ քեզ անոր տամ:

Էկլաղէն — Բայց ի՞նչպէս կ'ըլլայ, հայր, քանի որ խոտացած էք...

Տամ. — Խոտանալով Աւետարանէն թուղթ պատած չեղանք ա՛, ան ատեն անանկ քան մը ըսինք, բայց հիմա աղջիկս խուլի մը չեմ կրնար աալ: Չըլլալիք բան է, ո՛չ, ո՛չ, ամենեւին...

Էկլաղէն — Քեզի աղէկցնողը թող ան ալ նայի:

Տամ. — Ան չի կրնար բժշկուիլ, որովհետեւ չափազանց խուլ է:

Էկլաղէն — Բայց մէկ մը թող նայի:

Տամ. — Չըլլար ըսի ա...

Էկլաղէն — Մէյ մը նայելով ի՞նչ կ'ըլլայ:

Տամ. — Չըլլար ըսինք ա՛, չի կրցանք հասկցնել, Ես քեզի ուրիշի պիտի տամ:

Էկլաղէն — Ես ուրիշը չեմ ուզեր:

Տամ. — Բայց զիս պիտի բարկացնես, և ես ան ատեն ոչ մէկուն պիտի տամ քեզի:

Եկլադէն — Չեմ ուզեր, չեմ ուզեր, ես չպիտի ամուսնանամ: (Շտապով եւ բարկացած կ'երթայ):

Տամ. — (Մինակ) Ի՛նչ ապուր կերանք. ի՛նչ անխելքութիւնով չգիտցած մարդերնիս կերակուրի հրաւիրեցինք, ինչ որ է. թող կենայ, ուտէ, կորսուի երթայ: (Պատահանէն զանգակի ձայն) Արդեօք կրա՞կ կայ... Հա, հասկցայ, կերակուրի կը կանչէ... (պատահանէն) կը բաւէ. հոս խուլ չկայ... Ի՛նչ ալ աղուոր կը լսեմ, (պատահանէն նայելով) սա սրիկային նայեցէք, պարտէզը նստեր լրագիր կը կարդայ: Հա, Պօնիֆասը լուր տալու գնաց: Իմ հաւատարիմ Պօնիֆասս եթէ իմանայ լսելս, արդեօք որքա՞ն պիտի ուրախանայ, սա մարդուն զարմանալը տեսնել կ'ուզեմ, ահա իմ հաւատարիմ, սիրելի Պօնիֆասս

ՏԵՍԻԼ ԺԲ.

Տամուաչօ եւ Պօնիֆաս

Պօն. — (Ներս կը մտնէ եւ ձեռները սեղանից վրայ կը դնէ):

Տամ. — Ա՛հ, սիրելիս, եթէ գիտնաս...

Պօն. — Ահա ապուրը բերի, որկրամուտ արջ:

Տամ. — (Շուտաւ) Արդեօք ինձի՞ կ'ըսէ:

Պօն. — (Սեղանը շփելով) Եթէ 1200 ֆր. ի յոյս մը չունենայի, ես քեզի շատո՞նց անզիի

աշխարհք զրկած էի: ապուշ ցնորած: (Մեջքէն դիզուցնէ կ'երթայ):

Տամ. — Վա՛յ, ատոնք ինձի կ'ըսէ, հա... Ըսել է միշտ այսպէս կ'ըներ... Երեսիս խնդալ ու ետեւս միտ ուտել, վա՛յ անպիտան. ապերախ սրիկայ վայ, կեցիր իս քեզի կը հասկըցնեմ, դուռնէն դո՛ւրս, այո՛, անմիջապէս վա՛նտելու եմ. դուրս ելիր, փողոցները սլքտայ, որպէս զի քեզի հաց կերցնողին դէմ դաւաճանելը սորվիս: (Բլասիս ներս կը մտնէ):

ՏԵՍԻԼ ԺԳ.

Տամուաչօ եւ Բլասիս

Տամ. — (Բլասիսը տեսնելով) Քեզ ալ պարոն, քեզ ալ:

Բլասիս — Աս խոֆածը ի՛նչ է եղեր:

Տամ. — (Մեկուսի) Ի՛նչ է եղերը կը հասկնաս հիմա, (բարձր) հրամայեցէք:

Բլասիս — Շիտակը, ասկէ աւելի կոշտութիւն չըլլար:

Տամ. — (Բաղաբալար ձեռով մը) Պատանիդ կլլեցէք և կորսուեցէք, ապա թէ ոչ...

Բլասիս — Մարդուկը փոխուեր է...:

Տամ. — (Մեկուսի) Փոխուեր է, դուռն հիմա փոխուածը կը տեսնես, ինչ որ է, խելացութեամբ շարժինք, կորսուի երթայ, (արդ. մը տալով) հրամայեցէք:

Բլասիս — Շնորհակալ եմ, պարոն աւանակապետ:

Տամ. — (Բարկուրեամբ մեկուսի) Բայց հիմա... (Բարձր) ո՛չ, այդ աթոռը ինձի համար պատրաստեցի, ասիկա ա՛ն, ատոր վրայ անհանդիստ պիտի ըլլաս (կը նստի):

Բլասիս — (Բարձր) Արդեօք ձեր աղջկան հետ ամուսնանալու բախտը պիտի ունենամ:

Տամ. — (Մեկուսի) Դուն իշու պէս պօռայ, տես ի՞նչ աղուոր կը լսեմ, հրամմեցէք այս ապուրէն հրամմեցէք:

Բլասիս — Շնորհակալեմ պարոն, փորս կուշտէ:

Տամ. — Պօնիֆաս, կերտուր (կը բերէ):

Ի՞նչ բերիր:

Պօն. — (Սեղանին վրայ դնելով) Հրամմեցէք կաքաւ:

Բլասիս — Ի՞նչ ալ իշու նմանող աներ մը պիտի ունենամ, վրաս նայէ, եւ կապէ:

Տամ. — (Մեկուսի) Ես քու աներդ ըլլամ, Աստուած չընէ, քեզի պէս աւանակ մը ինձի փեսայ ընելուս, աղջիկս դերասանի մը կուտամ, աւելի աղէկ է... (Բարձր) պարոն, կաքաւ հրամմեցէք... տաք տաք կաքաւէն կ'ուտուի կարծեմ, հրամմէ...:

Բլասիս — Ներեցէք պարոն...:

Տամ. — Վա՛յ, կշտացա՞ք, (մեկուսի) ես ալ այդ կ'ուղէի:

Պօն. — Օղը աւրուած կը տեսնեմ...:

Տամ. — (Պօնիֆասի) Ինձի Հավանայի ուրիշան էր եւ պարոնին ալ քսաննոց բաքէթ մը...:

Բլասիս — Ձեր այս աւանակութենէն շնորհակալ եմ:

Պօն. — (Բլասիսի) Ես տակաւին ինչե՛ր կ'ըսեմ, դուք կը տեսնէք հիմա: (Սիկառները տալով) Աս ցնդած արջ, ապուշ աւանակ... դեռ կ'ուղե՞ս:

Տամ. — (Պօնիֆասը ցնցելով) Աս քեզի ցնդած, արջ, ապուշ, աւանակ... դեռ կ'ուղե՞ս:

Պօն. — (ծեծէն շուտաւ) Աւանակ, այո՛, ձեզի պէս:

Տամ. — (բարկուրեամբ Պօնիֆասին) Ինձի ոկրամոլ արջ, հէ՞... եթէ 1200 ֆրանքի յայտը չուներայիր, ինձի դժոխք կը զրկէիր, հէ՞...:

Պօն. — Ականջները կը լսեն... ի՞նչ ապուր կերանք:



ՏԵՍԻԼ ԺԴ.

Տաճուաչօ Բլասիս Պօնիֆաւս եւ Էկլլադէն
 Էկլլադէն — (Մսնելով) Ի՞նչ կայ, ի՞նչ է ան:
 Բլասիս — Հայրերնիդ կը լսէ:

Էկլլադէն — Այո՛, պարոն, կէս ժամէ ի վեր
 կը լսէ:

Պօն. — (Տաճուաչօին) Աղէկ աս՛, եթէ այդ
 տեսակ բան մը կայ, ինչո՞ւ լուր չէք տար որ
 ամէն մարդ գիտնայ իր խօսելիքները:

Տաճ. — Ի՞նչ լուր պիտի տամ, քեզ պիտի
 վճռեմ, ահա լուր կուտամ. (Բլասիսի) Քեզ ալ
 պարոն, քեզ ալ: Հա՛ նայէ, կոնակիդ տեսնեմ,
 ոտքերդ բաց. (Պօնիֆաւսի) դուն ալ շուտ անկո-
 դինդ ժողովէ ու կորսուէ, մէյ մըն ալ աչքիս
 չերեւաս: :

Պօն. — Կ'աղօչեմ, պարոն: :

Էկլլադէն — Հայր, պարոնը յանցանք չունի
 ... Ան ալ կը լսէ: :

Տաճ. — Ի՞նչ, խուլ չէ՞ ան:

Էկլլադէն — Ո՛չ, հայր:

Բլասիս — Օրիորդին սիրուն համար խուլ
 եղած էի:

Տաճ. — Վա՛յ, դուք ալ խուլ չէ՞ք:

Էկլլադէն — Տեսա՞ր հայր: :

Տաճ. — Է՛, տեսայ, ի՞նչ է եղեր:

Էկլլադէն — (Աղաչելով) Կը խնդրեմ հայր: :

Տաճ. — Չէ՛, չըլլար:

Բլասիս -- ծուկի գալով) Ա՛հ, կաղաչեմ,
 պարոն, մեզի մի տիրեցնէք սօս ձերին բժշկուե-
 լուն ողորմութիւնը թող ըլլայ: (Էկլլադէն եւ
 Բլասիս Տաճուաչօի երեսները կը շոյեն)

Տաճ. — Է՛ շատ աղէկ, շատ աղէկ, բայց
 պայմանաւ որ ինծի դէմ խօսած անվայել խօս-
 քերնիդ ետ առնելու էք:

Բլասիս — Կ'առնեմ, ամբողջութեամբ ետ
 կ'առնեմ հիմա դուք ալ խուլ չէք ես ալ հա՛ հա՛հա:

Պօն. — (Մեքսեղին մսնելով) Աս ամէն բանէ
 աղէկ է, հա՛ հա՛ հա՛:

Տաճ. — (բարկութիւնով) Քեզի ի՞նչ եղաւ:
 Դուն շուտ անկողինդ ժողովէ եւ աչքիս մի երևար:

Պօն. — Հապա մեր 1200 ֆրանքը՞:

Տաճ. — շո՞ւտ կորսուէ: :

Պօն — (Ժողովուրդին) Պարոններ, ձեր մէ-
 ջէն ինծի խուլ տէր մը չկա՞յ:



2279

2013



ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ
ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒ

	ՊՐԱՆ
1. — ՏՐՈՎԱԴԱՅԻ ՀՐԴԵՀԸ	15
2. — ԹՈՐՈՍ ԾԱՌԱՅ	15
3. — ՄԵՐ «ԱՄԱԹԷՕՐ»ՆԵՐԸ	20
4. — ՀԱՅ ԴՊՐՈՅԸ	25
5. — ԱԻԱՐԱՅՐԻ ԱՐԾԻԻԸ	25
6. — ԽԷՉՕՐԻՆ ԹՈՒՉԸ	7 1/2
7. — ԵՐԿՈՒ ԽՈՒԼԵՐ	10
8. — ԱՍԻԱՅԻ ՍԱՓՐԻՉԸ	7 1/2
9. — ԳՈՂԸ	7 1/2
10. — ՍԱՏԱՆԱՅ	5
11. — ԹԻՔ ԹԱՔ	15
12. — ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՈՒՏԻՆԵՐ	15
13. — ԴԴՈՒՄԻ ՎԱՃԱՐԱԿԱՆԸ	15

Կ. Տօնիկեան գրասունք կը հայրայրքէ ամեն ս
սակ գիրքեր, կը կատարէ վոխանակութիւն գրավս
հաւ եւ հեղինակներու հետ իր սեփական գրաս
րակութիւններով:

Հասցե՛

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ

Rue an Nahr (St. Michel)

Beyrouth (G. L.)

100